

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԹԻՖԼԻՍԻ ՅՕՐԵԼԻԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ ԵՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Հինգշաբթի, սեպտեմբերի 19-ին, երեկոյան ժամը 8-ին կայացաւ «հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի Թիֆլիսի յօրելեանական մասնաժողովի» արտակարգ նիստը

Մասնաժողովի անդամների մեծամասնութիւնը ներկայ լինելով, նախագահ Հ. Առաքելեան, բանալով ժողովը, կարդաց հետեւեալ զեկուցումը.

* *

Յարգելի անդամք յօրելեանական մասնաժողովի.

Ձեզ յայտնի է, որ անցեալ 1912 թ. սկզբին Կ. Հ. Հրատ. Ընկ. նախաձեռնութեամբ Թիֆլիսում կազմվեց մի յօրելեանական յանձնաժողով՝ հայ տպագրութեան 400-ամեակը տօնելու համար։ Սկզբում այդ յանձնաժողովը որոշեց տօնել տպագրութեան 400-ամեայ յօրելեանը մայիս ամսին, որոշ նկատումով, բայց յետոյ որոշեց տօնել նոյեմբերի 26-ին, այն ևս Թիֆլիսում։ Սակայն որովհետև հայ հասարակութեան, մամուլի և ինտելիգենցիայի շրջաններում հարց յարուցվեց ապ տօնին համազգային նշանակութիւն, կցելով նրան և հայ գրերի գիւտի 1500-ամեակի յօրելեանի տօնախմբութիւնը և իբրև համազգային տօն կատարել միացեալ յօրելեանը էջմիածնում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, ուստի էջմիածինը, ընդ առաջ գնալով այդ ցանկութեան, կազմակերպեց Կաթողիկոսի կարգադրութեամբ մի կենսորոնական յօրելեանական յանձնաժողով, որ մշակեց միացեալ յօրելեանի տօնախմբութեան ծրագիրը և որոշեց կատարել յօրելեանի բացումը 1912 թ. հոկտ. 13-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը, Օշականում և էջմիածնում, իսկ կնքումը այս տարվայ հոկտեմբերի 13-ին։ Այդ որոշումը շատ խելացի և նպատակայարմար էր թէ ըստ տեղի, թէ ըստ ժամանակի և թէ ըստ նպատակի։

Սակայն Թիֆլիսի յօրելեանական յանձնաժողովը ըմբոստացաւ այդ որոշման դէմ և չը կամեցաւ համակերպվել էջմիածնի կարգադրութեանը կամ միանալ նրա հետ, չը ճանաչեց էջմիածնի յանձնաժողովը իբրև կենսորոնականը, ուստի և բոյկոտ հրատարակեց հոկտ. 13-ի տօնախմբութեան դէմ, և ապա, երբ տեսաւ, որ էջմիածինը չը փոխեց իր կարգադրութիւնը, դադարեց այլ ևս գործունէութիւն ունենալուց, միայն առուանապէս գոյութիւն պահպանելով։

Ահա այդ ժամանակ մի խումբ անձինք, համակրող՝ յօրելեանը համազգային դարձնելու և էջմիածնում կատարելու գաղափարին, դիմեցին Թիֆլիսի հայ հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչներին և գումարելով 1912 թ. հոկտ. 8-ին բօքսայի դահլիճում մի մեծ ժողով, որին մասնակցում էին 170 անձինք—ինտելիգենցիայի, վաճառականութեան, հոգևորականութեան, արհեստաւորների և այլ զանազան պրոֆեսիաների ներկայացուցիչները—ընտրեցին «Թիֆլիսի յօրելեանական մասնաժողով», բաղկացած 40 անդամներից, և յանձնեցին նրան՝ 1) մասնակցել պատգամաւորութեան միջոցով էջմիածնում հոկտ. 13-ին կայանալի բացման հանդէսներին, 2) ճանաչել էջմիածնի յանձնաժողովը իբրև կենսորոնական և 3) մշակել ծրագիր գործունէութեան, ի նկատի ունենալով որ յօրելեանի վերջնական տօնախմբութիւնը նըշանակված էր այս 1913 թ. հոկտ. 12-ին։

Մասնաժողովը ընտրեց իր բիւրօն և մասնակցեց առանձին պատգամաւորութեամբ հոկտ. 13-ին կայացած յօրելեանի բացման հանդէսներին։

Ապա մասնաժողովը, որի նախագահը լինելու պատիւն ունեւ, 1913 թ. մարտի 11-ին նիստ գումարելով՝ մշակեց իբ գործունէութեան համար հետեւեալ ծրագիրը.

- 1) Դիմել Կաթողիկոսին հաստատել Թիֆլիսի յօրելեանական մասնաժողովն՝ իբրև աջակից էջմիածնի կենսորոնական յանձնաժողովին։
- 2) Մասնաժողովը Թիֆլիսում կընդունէ ուրիշ տեղերից հրաւիրված և եկած հիւրերին և նրանց հետ հանդիսաւոր նիստեր

կունենայ թիֆլիսում, բէֆէրատներով. յետոյ միասին կը գնան Էջմիածին:

3) Հրաւիրել հիւրեր՝ գլխավորապէս աշխարհից՝ կենտրոնի հաւանութեամբ և նրա անունից:

4) Լուսատիպ հրատարակել, պրոֆ. Մակլէրի ձեռքով, Էջմիածնի փոքրիկ բնակատարանը՝ ֆոտոտիպով (ծախս մինչև 4000 ռ.), որի մի մասն վաճառումից գոյանալիք գումարը նուիրել դպրոցական ֆոնդին:

5) Հրատարակել հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն հայոց գրի գիւտի պատմութիւնը և գրականութեան համառոտ սեսութիւնը:

6) Հրատարակել ժողովրդի և աշակերտութեան համար նոյնը հայերէն, մատչելի ըստ բովանդակութեան, եթէ կարելի է ձրի բաժանելու համար:

7) Դիմել նպաստամատոյց Յանձնաժողովին և խնդրել, որ աղէտեալների համար հանգանակված գումարի մնացորդը յանձնէ Էջմիածնի սինոդին՝ իբրև նուէր դպրոցական ֆոնդին, այն պայմանով, որ այդ գումարը մնայ անձեռնմխելի, իսկ նրա տարեկան 10%-ներով պահվեն կամ օժանդակվեն գիւղական դպրոցներ այն վայրերում, որոնք վտանգվել էին թուրք-հայկական ընդհարումների ժամանակ:

8) Մամուլի մէջ և դասախօսութիւններով արծարծել տօնի նշանակութիւնը և ծանօթացնել նրա էութեան հետ:

9) Յօրեկանի օրը բոլոր տեղերի հայոց եկեղեցիներում հանդիսաւոր պատարագ, մաղթանք, դպրոցական տօն, գրական-երաժշտական հանդէսով:

10) Կազմակերպել ժողովարարութիւն և նպաստ դասախօսութիւններով, երեկոյթներով, ներկայացումներով և այլն ի նպաստ դպրոցական ֆոնդի և վերի §§ 2-6 ծախսերը հոգալու:

11) Յանձնաժողովը իր գործառնութիւնների համար խորհրդակցում է կենտրոնականի հետ և նրա համաձայնութեամբ գործում:

Համաձայն իր որոշման՝ մասնաժողովը դիմեց Ամենայն Հայոյ Կաթողիկոսին 1913

թ. մարտի 18-ին հետևեալ գրութեամբ.

«Նորին Վեհափառութիւն

«Կաթողիկոսին Ամենայն Հայոց

«Գէորգ Վ-ի

«Վեհափառ Տէր.

«Երբ անցեալ տարի Ձեր Վեհափառութիւնը բարեհաճեց հրատարակել համազգային յօրեկանական տօնախմբութիւն հայ գրերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի, թիֆլիսի հայ հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչները, ժողով գումարելով 1912 թ. հոկտ. 8-ին Բօրսայի դաշխնում, ծանօթանալով ժողովին նախագահող Հ. Առաքելեանի ղեկուցումից Էջմիածնում Ձեր Վեհափառութեան կարգադրութեամբ հաստատված յօրեկանական յանձնաժողովի ծրագրի հետ, որոշեցին ընտրել թիֆլիսում ևս մի յօրեկանական մասնաժողով, բաղկացած հայ հասարակութեան բոլոր խաւերի ներկայացուցիչներից — գրականութեան, մամուլի, դեղարուեստի, վաճառականութեան, արհեստաւորների, հոգևորականութեան կայլն — որպէսզի այդ մասնաժողովը, իբրև աջակից Էջմիածնի կենտրոնական յանձնաժողովի՝ աշխատէ շուք և վայլ տալ յօրեկանական հանդէսներին, որոնք պէտք է տեղի ունենան այս տարի հոկտեմբերին Էջմիածնում:

«Ժողովը ընտրեց մասնաժողով, տալով նրան «Հայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի թիֆլիսի յօրեկանական մասնաժողով» անունը, բաղկացած 40 հոգուց, և որի մէջ մտնում են մամուլի, գրականութեան, գիւտութեան, դեղարուեստի, ինտելիգենցիայի, հոգևորականութեան, վաճառականութեան, կանանց, արհեստաւորների ներկայացուցիչներ: Այդ մասնաժողովին ժողովը պաշտօն տուեց, համաձայնութեամբ Էջմիածնի կենտրոնական յօրեկանական յանձնաժողովի հետ, մշակել մի մանրամասն ծրագիր առաջիկայ տօնախմբութիւնների, որոնք պէտք է կայանան Էջմիածնում, թիֆլիսում և այլ տեղերում, որպէսզի յօրեկանի տօնախմբութիւնը, որին հրաւիրվելու են և նշանաւոր հայագէտներ, գիտնականներ և հայութեան ներկայացուցիչներ զանազան եր-

կիրենրից, անցնէ շուքով և փառահեղու-
թեամբ, ի սպառի մեծ համազգային այդ
տօնի և Էջմիածնի աթոռի, ընդ բարձր
հովանաւորութեամբ և նախագահութեամբ
Ձեր Վեհափառութեան:

«Մասնաժողովը, այս մարտի 12-ին նիստ
գումարելով, որոշեց նախ քան ձեռնարկելը
իր գործունէութեան և դիմելը հանգանա-
կութեան յօդուտ Ձեր Վեհափառութեան
կողմից հաստատված ղպրոցական Փօնդի՝
դիմել Ձեր Վեհափառութեան և խնդրել
հաստատել հայրապետական օրհնառաք կօն-
դակով մասնաժողովի ընտրութիւնը: Այդ
հաստատութիւնից յետոյ, մասնաժողովը
վերջնականապէս կը մշակէ իր ծրագիրը և
կը ներկայացնէ Էջմիածնի կենտր. յօրհլ.
յանձնաժողովին՝ Ձեր Վեհափառութեան
քննութեան և հաստատութեան ենթարկելու
համար:

«Արդ, Վեհափառ Տէր, մասնաժողովս սրա-
նով պատիւ ունի որդիական ակնածութեամբ
և յարգանքով դիմել Ձեր Վեհափառութեան
և խնդրել Ձեր հայրապետական հաստատու-
թիւնը:

«Ձեր Վեհափառութեան հարազատ որդիք
«Նախագահ և անդամք մասնաժողովի՝
«18 մարտ 1913»

Եւ մինչ մասնաժողովը սղոյսում էր ստա-
նալ Կաթողիկոսական կօնգակ իր հաստա-
տութեան համար, այդ միջոցին՝ թիֆլիս
եկած նոր առաջնորդ Մեքրոպ եպիսկոպոսը
հարկ է համարում դիմել հեռագրով Կաթո-
ղիկոսին և խնդրել չը հաստատել մինչև
ինքը կը կարողանայ միացնել երկու յօրե-
լեանական մարմինները, այն է՝ մեր մաս-
նաժողովը և սղազբութեան 400-ամեակի
յանձնաժողովը, որ մինչ այդ, ինչպէս ասա-
ցինք, ինքն իրան լուծել էր, անգործու-
նէութեան դատապարտելով իրան, և բոյկոտ
էր հրատարակել Էջմիածնի ծրագրի դէմ:
Ստանալով առաջնորդի այդ հեռագիրը, Կա-
թողիկոսը յետաձգում է կօնգակի առա-
քումը և հրամանագրում առաջնորդին՝ հրա-
ւիրել երկու յօրելեանական մարմինները և
աշխատել միացնել նրանց:

Ձեզ յայտնի են, յարգելի տիկնայք և
պարոնայք, թէ այդ միութիւնը, հակառակ

մեր ամենքիս բուռն ցանկութեան, չը կա-
րողացաւ կայանայ շնորհիւ այն հանգա-
մանքի, որ առաջնորդ Մեքրոպ եպիսկոպոսը
ճշգորէն չը կատարեց Կաթողիկոսի հրա-
մանը, այլ կախեցաւ նախ լուծել երկու
մարմինները և ապա մի նոր յանձնաժողով
կազմել, ըայց այնպիսի ձգտումով, որ նորի
մէջ գերակշռօրէն մտնեն Լէօ-Չարգարեան,
այն է՝ Էջմիածնի ծրագիրը մերժող և նրա
դէմ բոյկոտ հրատարակող յանձնաժողովի
անդամները:

Մեքրոպ եպիսկոպոսը իրագործեց իր ծրա-
գիրը. կազմեց իր նախագահութեամբ մի նոր
«թիմական» կոչված յօրհլ. յանձնաժողով,
որի մէջ մտան Լէօ-Չարգարեան յանձնա-
ժողովի բոլոր անդամները և 3 նոր անձինք:

Մեր մասնաժողովը, նկատելով իրերի
այդպիսի վիճակը և չը կամենալով խոչըն-
դատ հանդիսանալ «թիմական» յանձնաժողովի
գործունէութեան, խոհեմութիւն և ազգա-
սիրութիւն համարեց հետանալ ասպարէզից:
Եւ Մեքրոպ եպիսկոպոսի «թիմական» յանձ-
նաժողովը սկսեց գործել, չը սպասելով
նոյնիսկ հաստատութեան, որի համար ինքը
դիմել էր Կաթողիկոսին: Վեհափառ Հայրա-
պետը միայն յուլիս ամսի 20-ին արձակել
էր իր վճիռը, որով ճանաչելով միաժամա-
նակ երկու յօրհլ. մարմինների գոյութիւնը՝
առաջարկել էր որ երկուսն ևս գործեն
միայն յօդուտ ղպրոցական Փօնդի, որով-
հետև «թիմական» յանձնաժողովը միջնոր-
դութիւն էր յարուցել, որ ղպրոցական
Փօնդին կցվի և զրական Փօնդը: Կաթողի-
կոսը հնարաւոր չէր գտել յարգել այդ միջ-
նորդութիւնը:

Ձեզ յայտնի է նոյնպէս, որ, չը նայելով
Վեհ. Կաթողիկոսի կողմից մեր մասնաժո-
ղովի հաստատութեան, մենք ամենքս որո-
շել էինք հանդէս չը գալ և թողնել, որ գոր-
ծէ «թիմական» յանձնաժողովը, որպէսզի առ-
նախմբութեան գործի մէջ պառակտում առ-
աջ չը բերենք: Օգոստոսի 16-ին ստացանք
Մեքրոպ եպիսկոպոսից Կաթողիկոսի յուլիսի
20-ին արձակած վճիռի պատճէնը, վճիռի,
որով հաստատում էր մեր մասնաժողովը:
Եւ դրանից յետոյ էր, որ սեպտ. 1-ին կա-
յացաւ մեր վերոյիշեալ որոշումը:

Սակայն, երբ այդ նիստից մի քանի օր յետոյ յայտնվեց, որ «Թեմական» յանձնաժողովը, զայրացած, որ Կաթողիկոսը ճանաչել է և մեր մասնաժողովի գոյութիւնը, հրաժարական է տուել, պատճառաբանելով թէ չէ կամենում երկպառակութիւն առաջ բերել յօրելեանի տօնախմբութեան մէջ, մեր մասնաժողովը, ամսիս 13-ին կայացած նիստում, որոշեց ասպարէզ գալ և ստանձնել Թիֆլիսում յօրելեանը տօնելու կազմակերպութիւնը, առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի մասնակցութեամբ: Այդ նպատակով և նոյն նիստում մշակեց հետեւեւ ծրագիրը.

1) Մասնակցել հոկտեմբերի 12-ին և 13-ին էջմիածնում կայանալի համապային յօրելեանի տօնախմբութեան:

2) Ընտրել մասնաժողովի անդամներէց մի ենթամասնաժողով՝ հանգանակութիւն կատարելու յօգուտ դպրոցական ֆօնդի:

3) Թիֆլիսում հոկտեմբերի 20-ին կազմակերպել հանդիսաւոր նիստ, նուիրված մեծ տօնին, որին հրաւիրել մասնակցելու քաղաքիս բոլոր գրական, գիտական և կուլտուրական հաստատութիւնները, առանց ազգի և կրօնի խտրութեան, ի նկատի ունենալով որ յօրելեանը ոչ միայն ազգային, այլ և կուլտուրական մեծ տօն է: Այդ նիստին պէտք է կարդացվեն բեֆերատներ և արտասանվեն ճառեր հայերէն, ռուսերէն, վրացերէն, թուրքերէն՝ բացատրող մեծ տօնի պատմութիւնը և քաղաքակրթական նշանակութիւնը:

4) Տպել մի բրօշուր՝ հայ գրերի գիւտի մասին և տարածել ժողովրդի մէջ, ինչպէս և յօդուածներ լրագիրներէ մէջ:

5) Ձեռք բերել Տ. Նազարեանից ս. Սահակի և Մեսրոպի մեծադիր պատկերները 1000 հատ և ուղարկել ձրիաբար հայոց եկեղեցական ծխական դպրոցներին:

6) Կազմակերպել հոկտ. 20-ի երեկոյեան գրական-երաժշտական հանդէս և ապա բանկէտ ի յիշատակ մեծ տօնին:

7) Հրաւիրել Թիֆլիսի թեմի առաջնորդին՝ մասնակցելու հանդէսներին, իբրև թեմի առաջնորդ:

8) Մասնակցել հոկտ. 12-ին և 13-ին Թիֆլիսում կայանալիք եկեղեցական և դըպ-

րոցական հանդէսներին և հոգեհանգիստներին:

9) Գումարել հինգշաբթի, սեպտ. 19-ին, յօրելեանական մասնաժողովի նիստը իր լրիւ կազմով և առաջարկել նրա քննութեան և վաւերացման ներկայ ծրագիրը:

Եւ մինչ մասնաժողովը պատրաստվում էր իրագործելու այս ծրագիրը, թէև ժամանակը շատ կարճ է, ահա Մեսրոպ եպիսկոպոսը, որ, ըստ օրինի, պարտաւոր էր հրաւիրել գործի մեր մասնաժողովը, իբրև Կաթողիկոսից ճանաչված, քանի որ միւսը, «Թեմականը», հրաժարական է տուել, բոլորովին անգիտութեան տալով մեր գոյութիւնը, ձեռնարկում է ստեղծել մի նոր յանձնաժողով, բայց այս անգամ այլևս առանց զրական ֆօնդի ծրագիրը առաջ քշելու: Մեսրոպ եպիսկոպոսի այս վարմունքը պախարակելի է և վիրաւորական մասնաժողովիս արժանապատուութեան համար, որովհետև նոյնիսկ հասարակ կարգապահութեան տեսակէտից՝ անհանդուրժելի պէտք է համարվի, երբ մի եպիսկոպոս չէ կամենում ճանաչել իր Պետից՝ Կաթողիկոսից ճանաչված մարմինը: Երկրորդ, մեր մասնաժողովը առաջինն է եղել, որ համակրութեամբ է վերաբերվել էջմիածնի ծրագրին, դպրոցական ֆօնդի գաղափարին և ստեղծվել է յատկապէս օգնելու մեծ Յօրելեանի իրագործման. նա արդէն մասնակցել է յօրելեանի բացմանը անցեալ տարի, մինչ միւս յանձնաժողովը սկզբում թշնամական դիրք է բռնել էջմիածնի ծրագրի դէմ, բոյկոտ յայտարարեց, իսկ յետոյ թէև ընդունել է ծրագիրը, բայց աշխատել է փոփոխութիւն մտցնել նրա մէջ և ջրատել դպրոցական ֆօնդը, ստեղծելով մի նոր ֆօնդ, գրական, որ սակայն համակրութիւն չը գտաւ ժողովրդի կողմից, այդ յանձնաժողովը չէ մասնակցել յօրելեանի տօների սկզբնաւորութեան: Արդ, էջմիածնի ներկայացուցիչ Մեսրոպ եպիսկոպոսը, փոխանակ խրախուսելու մեր մասնաժողովը, գործակցելու նրան, դեռ յանդգնութիւն է ունենում չը ճանաչել նրան, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ճանաչել է: Ընդդէմ է, ձգտելով ստեղծել մի նոր յանձնաժողով, նա յայտ-

նում է, թէ այդ յանձնաժողովը ըստ ամե-
նայնի կը գործէ էջմիածնի ծրագրով և
միայն յօգուտ դպրոցական ֆօնդի, և այդ
կողմից մեր մասնաժողովը պէտք է գոհա-
ցած նկատէ իրան, բայց այնու ամե-
նայնիւ Մեսրոպ եպիսկոպոսի վարժունքը
հանդէպ մի մասնաժողովի, որ իր մէջ պար-
ունակում է և ինտելիգենցիայի և հասար-
ակութեան բոլոր խաւերի ու դասակարգե-
րի ներկայացուցիչներն ու հասարակութեան
մէջ յարգված և դիրք ունեցող անձանց, չը
պէտք է մատնվի լուսթեան և մնայ անպա-
տիժ, որովհետև արհամարհանքը դէպի մաս-
նաժողովը՝ արհամարհանք է դէպի Թիֆլիս-
ի հայ հասարակութեան լուսագոյն և առա-
ջաւոր մասը: Ահա այս տեսակէտից մասնա-
ժողովս պէտք է իր որոշումը տայ. բայց,
միևնոյն ժամանակ, ի նկատի ունենալով
գործի վեհութիւնը, ի նկատի ունենալով
որ իր պարտականութիւնները ուղղամիտ և
անաչառ կերպով չըմբռնող մի եկեղեցակա-
նի անկօրրեկտ վարժունքը չը պէտք է
դրդէ մեզ երկպառակութիւն և պառակտումն
առաջ բերել և խափանել ազգային մի մեծ
յօրելեանի տօնախմբութիւնը, իմ անհա-
տական բայց ոչ նախագահի կարծիքը և առա-
ջարկն է 1) ընդգծել առաջնորդ Մեսրոպ
եպիսկոպոսի անկօրրեկտ և անուղղա-
միտ գործելակերպը, 2) զեկուցանել Ա-
մենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին,
որ մասնաժողովս, շնորհակալութիւն յայտ-
նելով նորին Վեհափառութեան՝ իրան ցոյց
տրված պատի համար, հաստատեալը
մասնաժողովիս, ստիպված է հրաժարվել
Մեսրոպ եպիսկոպոսի բնած դիրքի պատ-
ճառով և յօրելեանի տօնախմբութեան մէջ
պատեակտումն առաջ չը բերելու նպատակով,
թողնելով աբրողջ պատասխանատուութիւնը
Մեսրոպ եպիսկոպոսի վրա, 3) մասնակցել
պատգամաւորութեան միջոցով էջմիածնում
հոկտ. 12-ին և 13-ին կայանալիք Համազ-
գային Մեծ Յօրելեանին:

* *

Այս զեկուցումից յետոյ տեղի ունեցան
վիճարանութիւններ: Անդամներից ոմանք
այն կարծիքը յայտնեցին, որ, արդարև,
Մեսրոպ եպիսկոպոսի վարժունքը վերին

աստիճանի դատապարտելի և պախարակելի
է, ուստի մասնաժողովը ընառ ուշադրու-
թիւն չը դարձնելով նրա վարժունքի վրա՝
պէտք է շարունակէ իր գործունէութիւնը:
Այլք, դատապարտելով և պախարակելով
հանդերձ Մեսրոպ եպիսկոպոսի վարժունքը
և այդ վարժունքը հաճախելով սկզբից մին-
չև այժմ պատճառ տեղի ունեցած երկպա-
ռակութիւնների, առաջարկում էին, ի նշան
բողոքի, հրաժարական տալ և բոլոր պա-
տասխանատուութիւնը թողնել նրա վրա. այ-
լապէս, ասում էին նրանք, յօրելեանական
տօնախմբութեան մէջ կարող է պառակ-
տումն առաջ գալ:

Ի վերջոյ՝ ժողովը ձայների մեծամասնու-
թեամբ որոշեց հրաժարական տալ, բայց
պատճառաբանեալ՝ այլ ոչ պարզ հրաժարու-
կան, ի նշան բողոքի:

Ուստի և մի քանի բանաձևերից յետոյ
ընդունվեց միաձայն հետեւեալ բանաձևը.

«Թիֆլիսի յօրելեանական մասնաժողովը,
1913 թ. սեպտեմբերի 19-ին կայացած իր
արտակարգ նիստում, ի նկատի առնելով 1)
որ Թիֆլիսի թեմակալ առաջնորդ սրբազան
Մեսրոպ եպիսկոպոսը, անտես անելով մաս-
նաժողովիս դոյուքութիւնը, որ ճանաչված է
և գործի հրաւիրված Ամենայն Հայոց Վե-
հափառ Կաթողիկոսի կողմից, ինքը նոր յօ-
րելեանական մարմին է կազմում յօրել. տօ-
նախմբութիւնների կազմակերպութեան հա-
մար և նոյնիսկ խոչընդոտներ է յարուցա-
նում մասնաժողովիս գործունէութեան դէմ.
2) որ երկու յօրել. մարմինների միաժա-
մանակ գոյութիւնը և գործունէութիւնը ա-
ռաջ կը բերէ պառակտումն ի վնաս յօրել-
եանական տօնախմբութեան և դպրոցական
ֆօնդի աջող հանգանակութեան,

«Որոշեց՝

«Հրաժարվել իր գործունէութիւնից, չը
կամենալով խանգարել առաջնորդի ձեռնար-
կած գործին և այս մասին յայտնել Ամե-
նայն Հայոց Կաթողիկոսին և իրան ընտրող
հասարակութեան, ցաւ յայտնելով որ իր
դէմ յարուցված խոչընդոտների պատճառով
անկարող եղաւ կատարել իրան յանձնված
պաշտօնը»:

Ժողովը փակվեց դիշերվալ ժամը 12-ին: